

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԳԻՐԸ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՇԻՇՅԱՆԻՆ՝ ՏՈՐՈՆՏՈՅՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԱՌԹԻՎ

### ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

**Թորոնթո**

Ցնծագին ուրախությամբ կողջունենք օրհնությունը հողամասին, որի վրա շուտով պիտի բարձրանա նոր կառույցը համայնքիդ Սուրբ Երրորդության Եկեղեցիին՝ մեծագումար նվիրատվությամբը համայն ազգիս անկուգական բարերար Տիար Ալեք Մանուկյանի:

Տիրախնամ թեմիդ և անձնապես Ձեզի համար սիրելի Սրբազան, հաղթանակի օր մըն է:

Թող Աստված օրհնե ձեզ բոլորդ և Իր Սուրբ Հոգվո կնիքը դրոշմե Ձեր օրհնած հողի վրա:

Երանի Եկեղեցի շինողաց:

Սուրբ Էջմիածնեն բոլորիդ Մեր հայրական սերը, Մեր քաջալերանքը, Մեր հայրապետական օրհնությունը:

Ողջ լերուք, հաստատ կացեք, մխիթարեցարուք, միաբան լերուք, խաղաղություն արարեք: Ողջույն տուք միմյանց ի համբույր սրբության: Ամեն:

**ՎԱԶԳԵՆ Ա**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
28 մարտի 1986 թ.